# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրում 18.12.2024թ. տեղի ունեցած հանրային լսման վերաբերյալ

*ՕՐԱԿԱՐԳ* – «ԱՌՄ ՍԹՈՌԻՆ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական տարածքում երկրաբանական հետախուզական աշխատանքներ իրականացնելու համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսում (2-րդ քննարկում):

*ՆԵՐԿԱ ԷԻՆ* – Մայակովսկի բնակավայրի վարչական ղեկավար Վ. Բարսեղյանը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, «ԱՌՄ ՍԹՈՌԻՆ» ՍՊ Ընկերության տնօրեն Արմեն Մխիթարյանը, նախագծային փաթեթի հեղինակ և կատարող «Էլ ԷՆ ԴԻ» ՍՊ Ընկերության տնօրեն Ա.Անտոնյանն ու բնակիչներ: Ներկաների ցուցակը կցված է:

*ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ* – Բացման խոսքով հանդես եկավ Մայակովսի բնակավայրի վարչական ղեկավար՝ Վ. Բարսեղյանը: Նա ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը, որից հետո շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանին:

***Հ. Մեսրոպյան*** - ողջունեց ներկաներին, ներկայացավ և նշեց, որ 2023 թվականին տեղի է ունեցել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխություն՝ համաձայն որի քննարկումների պատասխանատուն և վարողը հանդիսանում է շրջակա միջավայրի նախարարության փորձագետը: Նախկինում այս ամենը իրականացվում էր համայնքի կողմից, սակայն այժմ արձանագրության կազմումը և տեսաձայնագրությունը իրականացվում են մեր

կողմից: Դեռ կան դեպքեր, որ հաշվետվությունը ներկայացված լինելով հին օրենքով՝ փորձաքննությունն էլ է իրականացվում հին օրենքով, սակայն 2024 թվականից լիարժեք գործում է նոր օրենքը: Նախկինում հանրային քննարկումները իրականացվում էին 4 լսումներով, սակայն այժմ Ա և Բ կատեգորիաներով փորձաքննություններն իրականացվում են 2 հանրային լսումով: Առաջին քննարկումը իրականացնում է Ընկերությունը համայնքի հետ միասին, իսկ երկրորդը իրականացնում ենք մենք՝ համայնքի և Ընկերության հետ միասին: «ԱՌՄ ՍԹՈՈՒՆ» ՍՊ Ընկերությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ է ներկայացրել Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական տարածքում նախաձեռնվող երկրաբանահետախուզական աշխատանքների հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: Հանրային լսման վերաբերյալ հայտարարությունը տպագրվել է «ԱՌԱՎՈՏ» օրաթերթում: Նախկինում հայտարարությունը տպագրվում էր 7 աշխատանքային օր առաջ, սակայն հիմա այն պետք է տպագրվի 15 օրացուցային օր առաջ: Բացի «ԱՌԱՎՈՏ» օրաթերթից տեղեկացվել է Աբովյան համայնքին և տեղադրվել է Շրջակա միջավայրի կայքում:

*Ա. Անտոնյան* – Հայտարարությունը տեղադրված է նաև Աբովյան համայնքի կայքում:

*Հ. Մեսրոպյան* – Ավելի լավ: Մինչ այս պահը նախատեսվող գործունեությունը գտնվում էր փորձաքննության փուլում: Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզաբանելու հայցվող տարածքում բազալտների հաստվածքի պարամետրերը, որակական հատկանիշները, որպես երեսապատման սալերի և այլ իրերի պատրաստման, իսկ արտադրական թափոնները խիճ և ավազ շինարարական աշխատանքների համար: Հորատվելու է 6 հորատանցք՝ 126մ ընդհանուր երկարությամբ: Հորատանցքների խորությունը ընդունվել է 10-27մ: Բացվելու է բացահանք: Վերցված նմուշները ուղղարկվելու են լաբորատորիա: Հաշվետվությամբ նախատեսված է 23 նմուշ: Լաբորատոր ուսումնասիրության արդյունքներն ունենալուց հետո Ընկերությունը կազմելու է պաշարների հաշվարկման հաշվետվություն: Այդ հաշվետվությունը ներկայացնելու է Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարություն: Այնտեղ պաշարները հաստատվում են:

Այնուհետև Ընկերությունը կնախաձեռնի արդյունահանման թույլտվություն ստանալու գործընթաց: Արդյունահանման գործընթացը քիչ առաջ նշեցի, որ նախկինում իրականացվում էր 4 հանրային քննարկումով, իսկ այժմ 2: Ըստ ներկայացված հաշվետվության հայցվող տեղամասում կարմիր գրքի կենդանիներ և բույսեր չկան, պետության կողմից պահպանվող հուշարձաններ, պատմամշակութային հուշարձաններ չկան: Բոլորիս քաջ հայտնի է, որ ցանկացած գործողություն իրականացնելը շրջակա միջավայրի վրա որոշակի բացասական ազդեցություն է ունենում: «ԱՌՄ ՍԹՈՈՒՆ» ՍՊ Ընկերությունը ներկայացրել է այն բնապահպանական միջոցառումները, որոնց իրականացման դեպքում մեղմացվելու է պատճառված վնասը: Դրանցից է, որ Ընկերությունը տեխնիկաների լիցքավորումը, յուղերի փոխումը և տեխնիկական սպասարկումը իրականացնելու է մոտակա ավտոսպասարկման կենտրոններում՝ բացառելով հողի աղտոտվածությունը: Կենցաղային աղբը հավաքվելու է հատուկ տոպրակների մեջ և տեղափոխվելու է համայնքի հետ համաձայնեցված տեղեր: Նախատեսվում է ընդերքօգտագործման թափոնների կառավարում: Տարվա չոր եղանակներին նախատեսվում է ջրցանման աշխատանքներ: Այս բնապահպանական միջացառումների համար Ընկերությունը նախատեսել է 895000 դրամ գումար: Բացի բնապահպանական միջոցառումներից Ընկերությունը նախատեսել է նաև մշտադիտարկումներ՝ հողի, ջրի, օդի, աղմուկի վերաբերյալ, որի համար Ընկերությունը նախատեսել է տարեկան 390000 դրամ: Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո Ընկերությունը իրականացնելու է ռեկուլտիվացիայի աշխատանքներ, այսինքն բերվելու է նախկին տեսքի: Վերականգնվող տարածքը 250 մ² է, որի համար նախատեսվել է 544000 դրամ, որից 10500 դրամը նախատեսվում է կենսաբանական ռեկուլտիվացիայի համար: Այսինքն ռեկուլտիվացիայից հետո այդ հատվածներում հող է լցվելու և իրականացվելու է ցանքս: Այսքանը գնահատման հաշվետվության վերաբերյալ: Եթե նախագծողը ավելացնելու բան ունի խնդրեմ:

*Ա. Անտոնյան* – Ասեմ, որ դեռևս ամեն ինչ գտնվում է նախնական փուլում և ոչ ոք չգիտի, թե տնտեսվարողը իր ուզածը կգտնի թե ոչ: Մեծ ռիսկերը Ընկերության ղեկավարության վրա է, քանի որ պրն Մեսրոպյանի կողմից նշված գումարներից բացի ծրագրված է մոտ 5,7 միլիոն դրամի ներդրում և հնարավոր է, որ այս ներդրումներից

հետո չհայտնաբերվի օգտակար հանածո: Այս պահին երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ են լինելու: Բնությանը այդքան վնաս չի հասցվելու, արդյունահանման աշխատանքներ չեն լինելու: Այսքանը:

*Հ. Մեսրոպյան* – Նշեմ, որ փորձաքննությանը մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները՝ Անտառային կոմիտեն, «Հայանտառ» ՊՈԱԿ-ը, ջրային ռեսուրսների, ջրային քաղաքականության, մթնոլորտային օդի ստորաբաժանումները, բնության պահպանվող տարածքների վարչությունը: Բացի Շրջակա միջավայրի նախարարությունից, փորձաքնության գործընթացին մասնակցել են նաև Առողջապահության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Ներքին գործերի նախարարությունները, Կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը և Ճիշտ է Ընկերությունը ներկայացրել է համայնքի համաձայնությունը, սակայն նոր օրենքի համաձայն մենք նորից ուղղարկում ենք համայնքապետարան՝ կարծիքի տրամադրման համար: Ստացված բոլոր դիտողությունները ներկայացվել են Ընկերությանը, որից հետո Ընկերությունը լրամշակել է հաշվետվությունը և ներկայացրել է փորձաքննության: Պետք է ասեմ, որ լրամշակված հաշվետվությունը նորից ուղղարկվել է կարծիքների և մենք ունենք երկրորդ անգամ արդեն լրամշակված հաշվետվության վերաբերյալ կարծիքներ:

Հովիկ Մեսրոպյանը ընթերցեց երկրորդ անգամ ստացված կարծիքները, որոնցից Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչությունը նշել էր, որ պետք է հստակեցվի ջրցանման համար վերցվող ջրի աղբյուրը, հողերի վարչությունը նշել էր, որ պետք է հստակեցվի արդյոք հատկացվող գումարը կբավականեցնի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար: Մնացած կառույցներն ու ստորաբաժանումները դիտողություններ և առարկություններ չունեն:

Եթե կան հարցեր խնդրեմ:

*Վ. Բարսեղյան* – Մանրամասն ներկայցվեց նախատեսվող գործունեությունը և իրականացվելիք միջոցառումները: Մենք առաջին անգամ տվել ենք մեր համաձայնությունը և հիմա նույնպես տալիս ենք: Պետք է պահպանվեն այն բոլոր միջոցառումները, որոնք ներկայացվեցին:

հետո չհայտնաբերվի օգտակար հանածո: Այս պահին երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ են լինելու: Բնությանը այդքան վնաս չի հասցվելու, արդյունահանման աշխատանքներ չեն լինելու: Այսքանը:

*Հ. Մեսրոպյան* – Նշեմ, որ փորձաքննությանը մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները՝ Անտառային կոմիտեն, «Հայանտառ» ՊՈԱԿ-ը, ջրային ռեսուրսների, ջրային քաղաքականության, մթնոլորտային օդի ստորաբաժանումները, բնության պահպանվող տարածքների վարչությունը: Բացի Շրջակա միջավայրի նախարարությունից, փորձաքնության գործընթացին մասնակցել են նաև Առողջապահության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Ներքին գործերի նախարարությունները, Կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը և ճիշտ է Ընկերությունը ներկայացրել է համայնքի համաձայնությունը, սակայն նոր օրենքի համաձայն մենք նորից ուղղարկում ենք համայնքապետարան՝ կարծիքի տրամադրման համար: Ստացված բոլոր դիտողությունները ներկայացվել են Ընկերությանը, որից հետո Ընկերությունը լրամշակել է հաշվետվությունը և ներկայացրել է փորձաքննության:

Հովիկ Մեսրոպյանը բարձրացրեց հետևյալ հարցերը.

- Պետք է հստակեցվի ջրցանման համար վերցվող ջրի աղբյուրը,
- Պետք է հստակեցվի, արդյոք հատկացվող գումարը կբավականեցնի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար, ինչպես նաև պետք է ներկայացվի ֆինանսական բանկային երաշխիք՝ փարձնական բացահանքից դուրս բերվող մակաբացման ապարների տեղադրման համար:

Եթե կան հարցեր խնդրեմ:

*Վ. Բարսեղյան* – Մանրամասն ներկայցվեց նախատեսվող գործունեությունը և իրականացվելիք միջոցառումները: Մենք առաջին անգամ տվել ենք մեր համաձայնությունը և հիմա նույնպես տալիս ենք: Պետք է պահպանվեն այն բոլոր միջոցառումները, որոնք ներկայացվեցին:

հետո չհայտնաբերվի օգտակար հանածո: Այս պահին երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ են լինելու: Բնությանը այդքան վնաս չի հասցվելու, արդյունահանման աշխատանքներ չեն լինելու: Այսքանը:

*Հ. Մեսրոպյան* – Նշեմ, որ փորձաքննությանը մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները՝ Անտառային կոմիտեն, «Հայանտառ» ՊՈԱԿ-ը, ջրային ռեսուրսների, ջրային քաղաքականության, մթնոլորտային օդի ստորաբաժանումները, բնության պահպանվող տարածքների վարչությունը: Բացի Շրջակա միջավայրի նախարարությունից, փորձաքնության գործընթացին մասնակցել են նաև Առողջապահության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Ներքին գործերի նախարարությունները, Կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը և ճիշտ է Ընկերությունը ներկայացրել է համայնքի համաձայնությունը, սակայն նոր օրենքի համաձայն մենք նորից ուղարկում ենք համայնքապետարան՝ կարծիքի տրամադրման համար: Ստացված բոլոր դիտողությունները ներկայացվել են Ընկերությանը, որից հետո Ընկերությունը լրամշակել է հաշվետվությունը և ներկայացրել է փորձաքննության:

Հովիկ Մեսրոպյանը բարձրացրեց հետևյալ հարցերը.

- Պետք է հստակեցվի ջրցանման համար վերցվող ջրի աղբյուրը,
- Պետք է հստակեցվի, արդյոք հատկացվող գումարը կբավականեցնի ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար, ինչպես նաև պետք է ներկայացվի ֆինանսական բանկային երաշխիք՝ փարձնական բացահանքից դուրս բերվող մակաբացման ապարների տեղադրման համար:

Եթե կան հարցեր խնդրեմ:

*Վ. Բարսեղյան* – Մանրամասն ներկայցվեց նախատեսվող գործունեությունը և իրականացվելիք միջոցառումները: Մենք առաջին անգամ տվել ենք մեր համաձայնությունը և հիմա նույնպես տալիս ենք: Պետք է պահպանվեն այն բոլոր միջոցառումները, որոնք ներկայացվեցին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – *հավանություն տալ «ԱՌՄ ՍԹՈՈՒՆ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Մայակովսկի բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքների թույլտվություն ստանալու գործընթացին:*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյան

«ԱՌՄ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ
տնօրեն՝ Արմեն Մխիթարյան